INECOBANK

Գնառաջարկի հայտարարություն-հրավեր

1. ‚Ինեկոբանկէ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիզկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ ***պլաստմասե պլոմբերի*** մատակարարման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 19.04..2024, 17:00

- Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը -19.04.2024/ պլոմբ: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել „rarե տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am էլ Հասցեով մինչև 22.04.2024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ “Ինեկոբանկ” ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
  - ԳՆՀ կոդը -22042024/ պլոմբ
  - մասնակցի անվանումը,
  - ներկայացման ամսաթիվը,
  - ստացող՝ ‚Ինեկոբանկէ ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել.
Կոնտակտային անձ՝

<u>1.*Ադմինիստրատիվ ստորաբաժանում, Գնումների բաժնի պատասխանատու աշխատակից* ***Լուիզա Ղազարյան, +37433008896***</u>

4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ:Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և ՙՀրապարակային սակարկությունների մասին՚ ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝

- Գնառաջարկ,
- Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
- Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
- Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
- <u>*(ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով)*</u>:

8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:

INECOBANK

12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

## <u>ԳՆԱՌԱՋԱՐԿ</u>

**«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ____ *<u>պլաստմասե պլոմբների</u>***
**գնառաջարկների ներկայացման հարցում**

| | Գնման առարկայի անվանումը | Քանակը | Միավորի արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ | Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | **Պլաստմասե պլոմբ կանաչ /լոգոյով/ մեծ / 40սմ** | **10 000 հատ** | | |
| 2 | **Պլաստմասե պլոմբ կանաչ /լոգոյով/ փոքր/ 25սմ** | **80 000 հատ** | | |
| 3 | **Պլոմբ փոքր ծրարի (նկարը՝ ստորև)**  | **100 000 հատ** | | |

INECOBANK

Առաջարկում ենք կատարել մատակարարումը___________ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կանխավճար_________________________________դրամ:

__________________________________________Մասնակցի/կազմակերպության  անվանումը

_______________________________________Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

"          "  ______________2024թ

Կ.տ